Վանքին մոտիկ մի լիճ կար (փոքրիկ լճակ), սուրբը գնաց ծովակի կողմը և ձայն էր տալիս հորը: Նա աշակերտի ձայնը չէր լսում, որովհետև բազմաթիվ գորտեր աղմկում էին, իսկ սքանչելի այր Երեմիան սաստեց գորտերին և ասաց՝ լռեցեք: Գորտերը իսկույն լռեցին և մինչև այսօր լուռ են ու չեն կռկռում»: Շատ բաներ կան գրված, իսկ մենք այսքանը կարևոր համարեցինք արտագրել: Շատ բաներից հետո և այս նույնպես գրված էր. «Սույն ժամանակ սքանչելի Երեմիան՝ Մարմաշենի վանահայրը, իր տունը թողեց իր ձեռնասուն աշակերտին՝ Սոսթենեսին, ինքը գնաց սուրբ հռչակավոր մենաստանը՝ Օհանավանքի անապատը, անապատի զարմանալի Մխիթար վանահոր մոտ և այնտեղ ճգնեց, այնտեղ մեռավ ու այնտեղ թաղվեց: Մահվան ժամին եկավ Սոսթենես աշակերտը, նրա հետ նաև Գրիգոր վարդապետը (Առստակա*) որդին, և նրան թաղեցին Մխիթար վանահոր հետ միասին: Դարձյալ դաշն կապեցին իրենց միջև, որ սիրով կլինեն միմյանց նկատմամբ և երկու վանքերին վիճակված թեմերը միասին լինեն, միմյանց չհարստահարեն Քասաղ գետից մինչև Կարսի ու Ծաղկոցների դռները. և Օհանավանքի վանահայրը իշխող լինի Մարմաշենի նկատմամբ: Օհանավանքի կոնդակը գրեցին, Սոսթենես և Գրիգոր վարդապետները կնքեցին, որը գրեցին Վախթանգ իշխանը Արուճի[189] ու Թալինի ազատները և այլք, որոնք այնտեղ գտնվեցին, խաչ կանգնեցրին, Երեմիայի գերեզմանի վրա արձանագրեցին, յուրաքանչյուրը գնաց իր տեղը: Այն գիրը, որ գրված էր գերեզմանի վրա, հետևյալն է. չորս հարյուր ութսուներկու (1033) թվին ես՝ հայր Երեմիաս՝ Սուրբ ուխտ Մարմաշենի առաջնորդս, սիրեցի միաբանական վանքը, ավանդեցի իմ ուխտի վերակացությունը իմ անդրանիկ Սոսթենեսին, իսկ ես եկա բնակվեցի այստեղ՝ անապատում: Այստեղ ընդունեցի փոխումը (մահը), աղաչում եմ հիշեցեք Քրիստոսով:

*Բնագրում առ Սկայորդին: Ձեռագրում առ սկա որդին: Առսկա մենք կարդում ենք Առստակա, որ է Արիստակես սեռ. Արիստակայ:

ԳԼՈՒԽ Ը
ԶԱՔԱՐԻԱ ԶՈՐԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

Քանզի նախապես խոստացանք Զաքարե զորավարի պատմությունը անել, թե որտեղի՞ց կամ ինչպիսի՞ն էր, որ համառոտակի պատմում է Կիրակոսը:

Բաբելացիների երկրում Զաքարիա անունով քրիստոնյա մի մարդ իշխանակարգվեց մարերի ազգի կողմից. նրանցից վիրավորված չկարողացավ մնալ այնտեղ. ժամանակ գտավ, առավ իր բոլոր ընդոծիններին՝ ծառաներ, աղախիններ իր տան (բանակի, գուցե բնակի՞) ունեցվածքը, հեռանալով բաբելական երկրից, հասավ պարսից տերությունը: Այնտեղից դանդաղ գալիս, մտնում է Հայաստանի սահմանները և գնում է Վրաստան: Այնտեղ վրաց թագավորներից իշխանություն ստանալով խիստ բարձրանամ է: Նրանից հետո (նրա տեղը գրավում է) իր որդի Վահրամը, սրանից հետո՝ սրա որդի Սարգիսը, որ եղավ մեծ իշխան: Սա ունեցավ երկու որդի, առաջինի անունն էր Զաքարե, իսկ երկրորդինը՝ Իվանե: Սրանք վրաց թագուհու կողմից սիրվեցին, որ կոչվում էր Թամար: Սա քաջ Գեորգի՝ Դեմետրեի դուստրն էր: Սա սիրեց նրանց և Իվանեին դարձրեց աթաբեկ*, իսկ Զաքարիային նշանակեց զորավար սպարապետ Մեծ Հայաստանի և Վրաստանի և նրա ձեռքը տվեց իր զորքերը: Նա արագ հզորացավ մեծ ուժով: Իսկ ինքը՝ Զաքարեն, հավաքեց հայոց ու վրաց բոլոր զորքերը ու գնաց, գրավեց բազմաթիվ քաղաքներ թուրքերից, պարսիկներից: Բաղեշից մինչև Արտաբիլ հնազանդեցրեց վրաց թագավորությանը, հարկադրեց նաև Կարնո սուլթանին: Ինչ երկիր որ գրավեց, այնտեղ եկեղեցի շինեց, մանավանդ Արագածի եզերքներում: Նախ Օհանավանքը, Հառիճա վանքը[190], Տեղերի վանքը, Ուշիի վանքը[191], Սաղմոսավանքը[192] և այլ շատ վանքեր ու եկեղեցիներ գյուղերում: Ապա ինքը՝ Զաքարեն վախճանվելով փոխվեց անանց թագավորություն և թաղվեց Սանահինում: Նրա տեղը գրավեց նրա Շահնշահ անունով որդին:

*Աթաբեկ բառացի նշանակում է հայր իշխան: Այստեղ նշանակում է գլխավոր նախարար: